Պարույր Սևակ

Նյարդի թրթիռը

Նորից են զանգում
(Ո՞րերորդ անգամ),
Զանգում են... գարնան դեսպանատնից.
Օտարսիրային անձնագիր են ինձ նրանք խոստանում:
Իզո՞ւր:
Չե՛մ գնա:
Ինձ՝
Քո աչքերի մութ ուղեծիրով թռած ու դարձած
Հին ու բազմափորձ աստղագնացիս,
Խաբելը բնավ այնքան էլ հեշտ չէ,
Որքան թվում է:
Ես տառապալից իմ փորձից գիտեմ,
Որ խաբուսիկ են օտար սերերը՝
Աստղերի նման.
Մեծ ու շողշողուն թվացողներն ավելի փոքր են
Ու հաճախ անլույս,
Քան փոքրիկները,
Որ իրականում հսկայական են...
Դու՝ փոքրի՛կ ու մե՛ծ,
Ինչպես իմ ու քո այս հայրենիքը,
Դու ինքնավստահ ժպիտով լսիր

Օտարսիրային այդ դեսպանատան
Բոլո՜ր զանգերը.
Թող զանգեն այնքա՛ն,
Մինչև որ հոգնեն:
Իսկ դու քայլ արա ու նստիր կողքիս
Այս սենյակ կոչված անեզրության մեջ,
Որտեղ բյուրավոր մումիաներ մանրիկ,
Որոնք հայտնի են փոշի անունով,
Անմահացել են
Ա՛յն բազմակերպար գրքերի վրա,
Որ իրենց դեմքով դարձած են դեպի պատը.
Կարծես թե
Պատժել են (ինչո՞ւ) երեխայի պես...
Եվ բավական չէ՞ ինձ նայես այսպես՝
Երեխայի պես պլշած հայացքով:
Չե՞ս զգում արդյոք,
Որ ապստամբած քո ձևերի տակ
Մենակությունն է ճխլել ինքն իրեն,
Հաճույքն է կտրել մազե կապերը իր զույգ թևերի
Ու կամենում է
Մտնել-գրավել մեր մարմինների դատարկ տեղերը,
Մեր ամբողջությունն ասես դարձնելով նյարդի մի կտոր՝
Կենտ աչքի ներքո մի ամենատես խոշորացույցի:
Եվ այդ մի կտոր նյարդի թրթիռը
Անցնում է հիմա... ո՜ղջ տիեզերքով...
Իսկ, նայի՛ր, դրսում
Մութն իրեն վրա նոր շերտ է քսում:
Լույսը մի՛ վառիր.
Բացված ծնկներիդ լուսամփոփային ճերմակությունն էլ
Մեզ համար շա՜տ է:

Ի՞նչ, հեռախոսն է զանգում: Ամո՛թ քեզ,
Որ դեռ կարող ես լսել զանգի ձայն:
Խլացի՛ր: Չքվե՛նք:
Նյարդի թրթիռը
Թո՛ղ կտրի անցնի անեզրությունը
Ու ետ գա կրկին.
Խոշորացույցի կենտ աչքը նրան մի՛շտ սպասում է...

22.III.1964թ.
Դիլիջան